ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԷՈՐԳ Զ-Ի ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՍՍԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ 500-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Շնորհազարդ Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ Տ. Գարեգնի Ա, Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Ս. Երուսաղիմայ Տ. Կիւրղի Բ, Ամենապատիւ Տեղապահի Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ Տ. Գէորգայ Սրբազան Արքեպիսկոպոսի Արսլանեան, Գերաշնորհ Առաջնորդաց, Հոգեշնորհ Փոխանորդաց, Բարձրապատիւ վանահարց և միաբանական Ուխտից, Ամենայն Աստուածահաճոյ եկեղեցական, բարեգործական և ուսումնական Հաստատութեանց և համայն ժողովրդեան ի մայրենի երկրի բնակելոց և՝ ճշդեհութեամբ սահեալ՝ ի տար աշխարհ սփռելոց ողջոյն սիրոյ և խաղաղութեան հասցէ ի Միածնէջ և փրկական Ս. Կաթուղիկէէս և Ս. Լուսաւորչին մերոյ Աջէս:

Դարք հինգ և տարիք հինգ անցին ի վերայ, յորմէ յետէ Աթոռն Հայրապետութեան Հայոց փոխեցաւ ի Սիս քաղաքէ Կիլիկիոյ անդրէն ի բնակ տեղին իւր ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ի Վաղարշապատ քաղաք, ի կայս թագաւորաց մերոց Արշակունեաց. ուր զառաջինն հիմնեցաւ ձեռամբ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ըստ տեսլեանն, որպես աւանդէ Ագաթանգեղեայ պատմութիւնն:

Բայց ոչ ընդ երկար և հաստատուն մնաց Աթոռն ի Վաղարշապատ քաղաքի, քանզի ազգի ազգի հանգամանք հարկ ի վերայ դնէին Կաթողիկոսացն Հայոց փոփոխել զտեղի բնակութեան իւրեանց, էր զի վասն հանապազորդ բանակցութեանց ընդ տիրողս աշխարհին մերոյ և էր զի յերեսաց արշաւանաց հիներից, որ ստէպ ստէպ գային: Ըստ այսմ տեսանեմք, զի անդէն ի վախճան դարուն հինգերորդի փոխեցաւ Աթոռ Հայրապետութեանն ի Դուին, յորում նստէին մարզպանք Հայոց. և անտի ընդ ժամանակս ժամանակս փոխեալ յԱրտամոնս և յԱդրամար, ի Վարագ և յԱնի. ի Մոկս և Հռոմկլայ և հուսկ ուրեմն յամին 1292 ի Սիս քաղաք Կիլիկիոյ, յաթոռանիստն թագաւորացն Հայոց Ռուբինեանց, ուրանօր եկաց մնաց մինչև ցամն 1441:

Այլ կարի աղէտալի եղև այս վերջին փոխադրութիւն Աթոռոյն զի մինչ Կաթողիկոսքն Հայոց ի Սիս փութային ակն ունելով հաստատութեան իշխանութեան իւրեանց օգնականութեամբ մերազնեայ իշխանաց և թագաւորաց Ռուբինեանց, սոքա ինքնին ուրացան զմայրենի եկեղեցին իւրեանց և յայտնապէս ընկալան զդաւանութիւն եկեղեցւոյն Հռովմայ, զոր յանձն առին նոքա վասն քաղաքական ակնկալութեանց, յուսացեալք եթէ օժանդակութեամբ արքայիցն Եւրոպիոյ յաջողեսցի նոցա պանել զիշխանութիւն իւրեանց ի Կիլիկիայ, որ շուրջ պատեալ էր մահմետական սուլթանօք և առ այս հարկ էր հանել զմիտս պապիցն Հռովմայ, ըստ որոց հրամանաց ոչ իշխէին արքայք Եւրոպիոյ առնել ինչ յօգուտ քրիստոնեայ իշխանաց Կիլիկիոյ, որք

ճերձուածողին էին յաչս եկեղեցւոյն Հռովմայ: Թէպէտ և ի դերև ելին յոյսք բազաւորացն Ռուբինեանց և ոչինչ նպաստ օգնականութեան գտին յարևմտից կուսէ, սակայն որ ըստ օրէ յաւելուին ջանք միաբանելոյ զնկեղեցին Հայոց ընդ Հռովմայ, հայրապետաբար միաբանողաց նպաստուրսիս, որք ունիցորք կոչին: Զի անա՝ ըստ օրինակի բազաւորացն Ռուբինեանց՝ Կաթողիկոսք ոմանք Սսոյ թուղթ նպաստակութեան գրեցին առ պապս Հռովմայ. որպէս և շատ եպիսկոպոսք սրտի մտաք թիւրեալք էին զկնի միաբանողացն մինչև ժողովոյ ինչ լինել ի Սիս, ուրանօր ընդունէին ինչ ինչ ձեսս և զբան դաշանութեան Լատինացւոց: Այսպէս որ բան զօր վատթարէր և նուաստանայր կաթողիկոսութիւնն Սսոյ և մերձ էր ի սպառ կործանումն:

Զայս աղէտ տարակուսի ուշի ուշով դիտէին վարդապետքն Հայոց արևելեայք, ի վանից Հաղբատայ և Սանահնի և Սիւնեաց, որք յաւուրս անտի Ներսիսի Լամբրոնացւոյ տեսանէին զվտանգ եկեղեցւոյ մերոյ ի նորասիրաց և ցանկացողաց միաբանութեան համօրէն եկեղեցեաց քրիստոնէից և ելք՝ ինարս խնդրէին գերծուցանել զանկախութիւն եկեղեցւոյ մերոյ ի նայլոց կեղծաւոր միաբանողացն:

Եւ իբրև ամենեին բարձաւ իշխանութիւնն Հայոց ի Կիլիկիոյ, ժամ պատեն համարեցան վարդապետքն արևելից ձեռն ի գործ արկանել փրկել զեկեղեցի մեր: Ի ձեռն նուիրակաց ծանուցին նոքա ամենայն վանօրէից Հայաստանեայց, «եթէ ի մտի ունէին ընդ հուպ հրաւիրել զնոսա ի խորհուրդ մի բարի և օգտակար»: Առաջնորդք այսր խորհրդոյ էին Յովհաննէս վարդապետ Հերմոնեցի, յաշակերտաց և յաջորդ մեծի վարդապետին Գրիգորի Տաթևացւոյ, որ զառաջնորդութիւնն իսկ ունէր զՏաթևայ վանից, Թովմաս Մեծոփեցի, առաջնորդ սրբոյ Լուսաւորչի Մեծոփայ. նախանձախնդիր իշխանութեանն Ս. Էջմիածնի: Առ ժամ մի լռեալ մնայր գաղտնի խորհուրդն, մինչև հնարիւք իմն, ձեռնատուութեամբ ոմանց հաւատարիմ եպիսկոպոսաց Սսոյ յաջողեցաւ կորզել ի կաթողիկոսարանէն Սսոյ զնաչ Սրբոյ Լուսաւորչին, քանզի ըստ վաղեմի սովորութեան Աչն համարեալ էր իբրև կնիք և երաշխաւորութիւն օրինաւոր ճշմարիտ Հայրապետութեան, զի որ ճշմարիտ հայրապետն իցէ առ նմա անկ էր լինել և Աչոյ Ս. Լուսաւորչի կամ որպէս ասէ Առաքել պատմագիր— (Գլ. ԺԷ)— «Ի վերայ Աչոյն Ն էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»:

Իբրև ծանեան վարդապետքն. եթե Աչն հանեալ էր ի Սսոյ և գտանի ի Ս. Էջմիածնի ապա յայտնի հրաման եղուն ամենայն եպիսկոպոսաց և վարդապետաց գալ հասանել ի Ս. Էջմիածին յամին 1441 ի խորհուրդն սուրբ և օգտակար: Եւ ժողովեցան յամենայն կողմանց Հայաստան աշխարհին եկեղեցականք աւելի քան զերիս հարիւր. եպիսկոպոսունք, վարդապետք, վանահարք, աւագ երիցունք, այլ և բազում արք, որոց ոչ էր հնար գալ՝ թղթով ծանուցին զմիաբանութիւն իւրեանց: Եւ յաշխարհական կարգէ բազմութիւնք ազատաց և ազատորդեաց և տանուտեարց: Եւ եղև ի Վաղարշապատ քաղաքի ժողով մեծ Ազգային-Եկեղեցական:

Ի ժողովի անդ միաբան հաւանութեամբ ամենեցուն հաստատեցաւ, քանզի չէր հնար ի Սիս քաղաքի զերծ պահել զեկեղեցին Հայոց, զդաւանութիւն և զկարգս եկեղեցւոյն Հայաստանեայց յազդեցութենէ Ցոանկաց և չէր այլ ևս պատճառ ինչ պահելոյ զԱթոռ Հայրապետութեան Հայոց ի տար աշխարհին, հեռի ի ժողովրդէն Հայոց, ապա հարկ անհրաժեշտ կայր փոխել զԱթոռն Հայրապետութեան ի Սսոյ անդրէն ի Վաղարշապատ՝ ի բնակ Մայր Աթոռն Հայոց: Եւ քանզի ոչ հաւանեցաւ Կաթողիկոսն Սսոյ գալ ի ժողով անդր, յոր հրաւիրեցաւն, ապա հարկ էր ընտրել նոր կաթողիկոս: Ըստ այսմ մեծի հաւանութեան միաբան ամենեքեան ընտրեցին զՏէր Կիրակոս Վիրապեցի, յաստիճանէ քահանայութեան, զայր սուրբ և բարեպաշտօն. հեզ և խոնարհ, ի Վասպուրականէ, որ ի վերջին ամս միայնակեցութեամբ կեայր ի վանս Վանաստան մերձ Ակոռի գեղջ յոտն Մասեաց: Զկնի միաբան ընտրութեան համօրէն ժողովոյն եղուն նմա նախ զգաւազան վարդապետութեան, ապա ձեռնադրեցին եպիսկոպոս և յաւուր տօնի Համբարձման Տեառն, յամին 1441, օծին զնա կաթողիկոս Ամենայն Հայոց և Պատրիարք Աթոռոյն Ս. Էջմիածնի:

Զէ կարգ բանիս յիշատակել զանցսն որ անցին ի Ս. Էջմիածին ի վերջին հինգ դարս. զաւուրս նեղութեանց և հարկապահանջութեանց, զշինութեանց և բարեկարգութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ. զայս ամենայն ըստ խնդրոյ Մերում գրէ հանգամանօրէն եղբայրն Մեր ի Քրիստոս Տէր Գարեգին Ս. Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, յորմէ զամենայն ինչ մարք է ուսանել:

Զայս և եթ հարկ է ասել, զի այս վերջին

փոխումն Հայրապետական Աթոռոյն ի Ս. Էջմիածին կարի իմն նմանութիւն բերէ ելիցն Իսրայէլի յԵգիպտոսէ. զի որպէս անդ յառաջնումն Իսրայէլացիք փրկեցան ի դառն ծառայութենէն և գերութենէն Եգիպտացւոց, ըստ սմին օրինակի և դարձն կաթողիկոսարանին ի Սսոյ ի Ս. Էջմիածին փրկեաց զեկեղեցի մեր ի գերութենէն Լատինացւոց եկեղեցւոյն և հաստատեաց անվկանդ զազատութիւն և զանկախութիւն եկեղեցւոյ մերոյ և նորին Հայրապետաց յորոգայթից բանսարկուին: Որում քաջ հասու եղեալ ոմն ի պատգամաւորացն եկեղեցական ժողովոյն, որ գումարեցաւ ի Ս. Էջմիածին յընտրութիւն նորոյ կաթողիկոսի՝ առաջի աբար ժողովոյն՝ յաւերժացուցանել զայս տօն յիշատակի արժանավայել իմն եղանակաւ: Ընդ որ հանեցյալ ժողովոյն սահմանեաց զամս վեց (1941—1946) անուանել ամս յոբելինի և կատարել հանդէս յամենայն եկեղեցիս Հայոց: Ի տիպ արձանացուցանել զպատմութիւն եկեղեցւոյ մերոյ յամէ փոխման Աթոռոյն ի Ս. Էջմիածին մինչև ցայսօր: Ընդ սմին և Մեք արժանի համարիմք ի պատուիրեմք, զի յայսմեանէ յամենայն օրացոյցս եկեղեցւոյ մերոյ յաւուր տօնի Համբարձման Տեառն յաւելցի յիշատակս այս Տարեդարձ փոխման Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սսոյ ի Ս. Էջմիածին յամի Տեառն 1441, և պաշտել յեկեղեցիս զայս տօն ազգային հանդիսիւ և մաղթանօք և երգով «Էջ Միածինն ի Հօրէ» շարականին:

Աղաչեսցուք զԱմենակալն Աստուած, զի անսասան պահեսցէ զեկեղեցի իւր սուրբ յամենայն բշնամեաց երևելեաց և աներևութից, և կարդասցուք առ նա ըստ հանապազօր մաղթանաց մանկանց եկեղեցւոյն՝ «Բարեխօսութեամբ վերին քո զօրաց միշտ անշարժ պահեա զԱթոռս Հայկազնեայց»:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն սեպտեմբերի 1946 ամի
յերկրորդում ամի Հայրապետութեան Մերոյ
ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ